

# Մաքսերի և առևտրի 1994թ. գլխավոր համաձայնագրի XXVIII Հոդվածի մեկնաբանության մասին փոխհամաձայնություն

Սույնով Անդամները համաձայնում են հետևյալի մասին.

1. Չիջման փոփոխման կամ հանման նպատակներով, այն Անդամը, որն ունի զիջման ազդեցությանը ենթակա արտահանումների (այսինքն՝ զիջումը փոփոխող կամ հանող Անդամի շուկա արտադրանքի արտահանումների) ամենաբարձր հարաբերակցությունն իր ամբողջ արտահանման նկատմամբ, համարվում է մատակարարման հիմնական շահագրգռություն ունեցող, եթե այն արդեն առաջնային բանակցային իրավունք կամ մատակարարման հիմնական շահագրգռություն չունի համաձայն XXVIII Հոդվածի 1-ին կետի: Այնուամենայնիվ, համաձայնեցված է, որ ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հինգ տարի հետո Ապրանքների առևտրի խորհուրդը վերաքննելու է սույն կետը՝ նպատակ ունենալով որոշել՝ բավարար էր արդյոք այս չափանիշի գործողությունը փոքր և միջին չափի արտահանող Անդամների օգտին բանակցային իրավունքների վերաբաշխումը երաշխավորելու համար: Եթե դա այդպես չէ, ապա կդիտարկվեն բարելավումների հնարավորություններ՝ ներառյալ չափանիշ ընդունելը՝ ելնելով զիջման ազդեցությանը ենթակա արտահանումների և բոլոր շուկաներ խնդրո առարկա արտադրանքի արտահանումների հարաբերակցությունից՝ հաշվի առնելով համապատասխան տեղեկությունների մատչելիությունը:

2. Եթե Անդամը համարում է, որ ինքը մատակարարման հիմնական շահագրգռություն ունի 1-ին կետի առումով, ապա նա պետք է իր հայցը՝ օժանդակ ապացույցների հետ միասին գրավոր կերպով հաղորդի այն Անդամին, որն առաջարկել է փոփոխել կամ հանել զիջումը, և միաժամանակ տեղեկացնի Քարտուղարությանը: Այդ դեպքերում կիրառվում է 1980թ. նոյեմբերի 10-ին ընդունված «XXVIII Հոդվածի համաձայն վարվող բանակցությունների ընթացակարգերի» (BISD 27S/26-28) 4-րդ կետը:

3. Որոշելու համար, թե որ Անդամներն ունեն մատակարարման հիմնական շահագրգռություն (համաձայն վերոհիշյալ 1-ին կետի կամ թե XXVIII Հոդվածի կետ 1-ի) կամ էական շահագրգռություն, հաշվի է առնվում միայն ազդեցության ենթակա արտադրանքի ԱԱԲ հիմունքով կատարված առևտուրը: Այնուամենայնիվ, ազդեցության ենթակա արտադրանքի առևտուրը, որը կատարվել է համաձայն ոչ պայմանագրային արտոնությունների, նույնպես հաշվի է առնվում, եթե խնդրո առարկա առևտուրը դադարել է օգտվել այդ արտոնյալ մոտեցումից զիջումի փոփոխման կամ հանման համար տարվող բանակցության ժամանակ՝ այդպիսով դառնալով ԱԱԲ հիմունքով առևտուր, կամ կդադարի այդ բանակցության եզրափակմամբ:

4. Եթե մաքսային զիջումը փոփոխվում կամ հանվում է նոր արտադրանքի համար (այսինքն՝ մի արտադրանքի, որի համար երեք տարվա փնտրակարգությունն առկա չէ), ապա համարվում է, որ այն Անդամը, որն առաջնային բանակցային իրավունք ունի այն մաքսային հոդվածի մասով, որով արտադրանքը դասակարգվում է կամ սկզբնապես դասակարգվել էր, առաջնային բանակցային իրավունք ունի տվյալ զիջման մասով: Մատակարարման հիմնական կամ էական շահագրգռությունը որոշելու և փոխհատուցումը հաշվարկելու համար այլոց թվում հաշվի են առնվում արտահանող Անդամ-երկրում ազդեցության ենթակա արտադրանքի մասով արտադրական կարողությունն ու ներդրումները և արտահանման աճի գնահատականները, ինչպես նաև ներմուծող Անդամ-երկրում արտադրանքի պահանջարկի կանխատեսումները: Սույն կետի նպատակներով հասկացվում է, որ «նոր արտադրանքը» ներառում է մաքսային հոդված, որը ստեղծվել է գոյություն ունեցող մաքսային հոդվածից անջատվելու միջոցով:

5. Եթե Անդամը համարում է, որ ինքը մատակարարման հիմնական կամ էական շահագրգռություն ունի 4-րդ կետի առումով, ապա նա իր հայցը օժանդակ փաստաթղթերի հետ միասին գրավոր կերպով հաղորդում է այն Անդամին, որն առաջարկել է փոփոխել կամ հանել զիջումը, և միաժամանակ տեղեկացնում է Քարտուղարությանը: Այդ դեպքերում կիրառվում է վերը նշված «XXVIII Հոդվածի համաձայն վարվող բանակցությունների ընթացակարգերի» 4-րդ կետը:

6. Եթե անսահմանափակ մաքսային զիջումը փոխարինվում է սակագնային քվոտայով, ապա տրամադրվող փոխհատուցման չափը պետք է գերազանցի զիջման փոփոխումից փաստացիորեն ազդեցություն կրած առևտրի չափը: Փոխհատուցման հաշվարկի համար հիմք պետք է լինի այն չափը, որով ապագա հեռանկարային առևտուրը գերազանցում է քվոտայի մակարդակը: Հասկացվում է, որ ապագա հեռանկարային առևտրի հաշվարկը պետք է հիմնված լինի հետևյալներից ավելի մեծի վրա՝

ա) ամենավերջին հատկանշական երեք տարի ժամանակահատվածի միջին տարեկան առևտրի՝ մեծացված այդ նույն ժամանակահատվածում ներմուծումների միջին տարեկան աճի գործակցով կամ 10 տոկոսով, որը որ ավելի մեծ է, կամ՝

բ) ամենավերջին տարվա առևտրի՝ մեծացված 10 տոկոսով:

Անդամի փոխհատուցման պարտքը ոչ մի դեպքում չի գերազանցում այն փոխհատուցումը, որին կհանգեցնեն զիջման ամբողջական հանումը:

7. Ցանկացած Անդամի, որը փոփոխված կամ հանված զիջման մասով մատակարարման հիմնական շահագրգռություն ունի համաձայն վերոհիշյալ 1-ին կետի կամ թե համաձայն XXVIII Հոդվածի 1-ին կետի, փոխհատուցողական զիջումների մասով շնորհվում է առաջնային բանակցային իրավունք, եթե խնդրո առարկա Անդամները չեն համաձայնել փոխհատուցման այլ ձևի շուրջ: